ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՌԱԽՈՐԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Վ. Գ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

Վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը նվիրված հետազոտությունների առարկան հիմնականում հանդիսացել են առավել բարդ հորինվածք ունեցող հուշարձանները, իսկ քառաթև գմբեթավոր փոքր կառույցներից դիտարկվել են միայն մի երկուսը, այն էլ ընդհանուր բնույթի աշխատություններում։ Ամբողջական հետազոտության բացակայության հետևանքով տվյալ խմբի գրեթե բոլոր հուշարձանները վերագրվել են VII դարին։ Հայաստանի քառախորան եկեղեցիները, որոնք քառաթև գմբեթավոր փոքր հուշարձանների մի ենթատեսակն են, մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն այդ տեսակի, այլև ընդհանրապես վաղ միջնադարի հայ ճարտարապետության կենտրոնագմբեթ շինությունների քննության համար։

Քառախորան կառույցների խմբում հետաքրքրական է Ծովիզ կամ Մորո ձորո վանքի ս. Աստվածածին եկեղեցին, որը փաստորեն խաչաձև հորինվածք ունեցող գմբեթավոր հուշարձանների սկզբնական ձևերից մեկն է։

Վանքի մասին պատմագրական և մատենագրական տեղեկություններ չկան։ Կառույցը հատուկ քննության չի ենթարկվել նաև մասնագիտական գրականության մեջ։ Առաջին անգամ հուշարձանը համառոտակի ներկայացրել է Հ. Եղիազարյանը[1]։ Երկրորդ տեղեկությունը գտնում ենք «Աղստևի հովտի պատմական հուշարձանները» գրքում[2]։ Իսկ «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» մեջ առաջին անգամ տպագրվել է կառույցի հատակագիծը[3]։

Հուշարձանը գտնվում է Իջևանի շրջանի Ծովիզ գյուղի հարավ-արևմտյան ծայրում՝ երեք կողմից անտառապատ լեռներով շրջապատված փոքր սարահարթի վրա։ Եկեղեցին հիմնականում կանգուն է։ Քանդված են խաչաթևերի ծածկերը, գմբեթատակ քառակուսու արտաքին անկյունները (բացի հարավ-արևմտյանից) և գմբեթը, որից պահպանվել են միայն առաջին շարքը և երկրորդ շարքի որոշ քարեր՝ հյուսիս-արևելյան կողմում։ Թափված է արևելյան և արևմտյան գմբեթարդների ու թմբուկի երեսպատման քարերի մեծ մասը։

Կառույցի հիմնական ծավալը, մինչև գմբեթարդները, շարված է բազալտի անմշակ քարերից, կրաշաղախով, իսկ հենախորշերի անկյունային մասերը, գմբեթակիր կամարները, գմբեթարդները և թմբուկը՝ սրբատաշ քարերից են։ Սրանք հիմնականում սպիտակ և կարմրավուն են, սակայն ժա-

---

1. Հ. Եղիազարյան, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, Իջևանի շրջան (Ուղեցույց), Երևան, 1947, էջ 19։ Կառուցվածքի նկարագրության մեջ առկա են մի շարք անճշտություններ (մուտքի տեղադրություն, լուսամուտների քանակ և այլն)։

2. Ի. Բ. Էլարյան, Աղստևի հովտի պատմական հուշարձանները, Երևան, 1968, էջ 72։

3. «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 142։

մանակի ընթացքում սևացել և մոխրագույն տեսք են ստացել։ Հիմնական ծավալի պատերի վրա թե՛ դրսից և թե՛ ներսից պահպանվել են սվաղի հետքեր։

Ոռվիզի հորինվածքի հիմքում ընկած է հավասարաթև խաչը։ Չորս կողմից իրար հպվող, գմբեթարդներով ավարտվող խորանները ստեղծում են

Նկ. 1. Ոռվիզ կամ Մորո ձորո վանքի ս. Աստվածածին եկեղեցին հյուսիս-արևմուտքից։

գմբեթատակ քառակուսի, որի վրա բարձրանում է կառույցի գմբեթը։ Խորանները չափերով հավասար են միմյանց (3,22 մ) և ունեն խիստ պայտաձև հատակագիծ։ Շեշտված պայտաձև են նաև գմբեթակիր կամարները, որոնք արևելյան կողմում հանգչում են բարդ, իսկ արևմուտքում՝ պարզ տրամատ ունեցող խոյակների վրա։ Քառակուսի հիմքից դեպի թմբուկ անցումը իրականացված է գմբեթակիր կամարների միջև տեղադրված առագաստներով։ Վերջիններս պսակված են պարզ տրամատի քիվով, դառնալով այն շրջանաձև հիմքը, որի վրա բարձրանում է նմանատիպ քիվով ավարտվող գլանաձև թմբուկը։

Արևելյան խորանը շեշտված է հյուսիս-արևելյանից հարավ-արևելյան խոյակը ձգվող, տարբեր զարդատարրերով մշակված հորիզոնական գոտու

միջոցով, որը տեղադրված է հիմնական ծավալի և գմբեթարդի միջև։ Գմբեթատակ հիմքի չորս անկյուններում գմբեթակիր վերին կամարների միացումը ընդգծված է սեղանաձև և բազմանկյուն եզրագիծ ունեցող առանձին քանդակազարդ քարերով։ Տարբեր քանդակներ (թռչուն, բուսական և երկրաչափական զարդանախշեր) կան նաև թմբուկի ներսի պատերին։

Արևելյան և արևմտյան խաչաթևերում տեղադրված են ուղղանկյուն, հատակագծում դեպի ներս լայնացող լուսամուտներ։ Հարավայինում՝ նույնպես դեպի ներս լայնացող, ներսից կամարակապ, իսկ դրսից հորիզոնական բարավորով մուտքն է։ Հարավային խաչաթևը, ի տարբերություն մյուսների, որ կրկնում են ներքին շրջանաձև հորինվածքը, արտաքինից ունի ուղղանկյուն եզրանկար։

Թմբուկը դրսից գլանաձև է։ Նրա բարձրագիր պատերին տեղադրված են դեպի ներս լայնացող չորս լուսամուտներ։ Սրանք վերին մասերում ունեն ուղղանկյուն եզրագիծ և պսակված են ներսում քանդակազարդ, դրսում տրամատված երեսակալներով։

Թմբուկի հիմնական ծավալը և հիմքը երիզված են պարզ տրամատի քիվերով։ Դրանք ստորին մասում թեքադիր տաշված հարթ սալեր են։ Այդպիսին է նաև թմբուկի քիվը, որը ստորին մասում ունի կիսաշրջանաձև մի փոքրիկ տրամատ ևս։

Տովիզի եկեղեցին հարուստ է XII—XIII դդ. վիմական արձանագրություններով, որոնք փորագրված են գմբեթարդների վրա, թմբուկի հարավահայաց և արևմտահայաց երեսներին։ Վիմագրագետ Ս. Ա. Ավագյանը գրում է. «Մորո ձորո վանքի վիմագրությունը նրա պատմության միակ աղբյուրն է և հնարավորություն է տալիս հետևելու այդ հոգևոր կենտրոնի գործունեությանը սկսած 12-րդ դարի վերջին քառորդից մինչև 13-րդ դարի առաջին տասնամյակները»[4]։ Այդ արձանագրություններից երկուսը վերաբերում են ս. Աստվածածին եկեղեցու վերակառուցմանը։ Թմբուկի հարավահայաց երեսի արձանագրությունը վկայում է. «Ի թուի Ո(խ)Զ... շինեաց Իւանէ զվանքս Մորո ձորո (և ե)ս Նանա կամակից և աւգնական եղէ Ածածնիս...»[5]։

Ինչպես նշում է Ս. Ավագյանը «շինեաց» և «շինեցաք» բայաձևերը տվյալ դեպքում և հայ վիմագրական բազմաթիվ հուշարձաններում արտահայտում են ոչ թե եկեղեցին ի նորո շինելու, կանգնեցնելու, կառուցելու, այլ վերանորոգելու, վերակառուցելու, վերստին շինելու իմաստ։ Սա հաստատվում է նաև հուշարձանի մանրակրկիտ ուսումնասիրությամբ։ Պարզվում է, որ Իվանեն 1197 թ. վերակառուցել է գմբեթատակ քառակուսուց դեպի թմբուկ ձգվող փոխանցման գոտին, գմբեթը՝ թմբուկի հետ միասին և հիմնական ծավալի արտաքին ծածկերը։ Վերակառուցման ժամանակ հուշարձանը (գմբեթարդները ներառյալ) կանգուն է եղել[6]։ Այս հանգամանքը ապացուցվում է հարավային

---

4 Ս. Ա. Ավագյան, Աթաբեկ Իվանեի նորահայտ արձանագրությունը Մորո ձորո վանքում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1967, № 10, էջ 90)։

5 Նույն տեղում, էջ 88։

6 Հնագույն կառույցի մյուս մասերից (փոխանցման գոտի, թմբուկ, գմբեթ, քիվ, երեսակալ) ոչինչ չի պահպանվել ոչ հուշարձանի վրա, ոչ էլ նրա շրջակայքում, և դրանց ձևերի ու մշակման մասին դժվար է օրևէ որոշակի բան ասել։

խաչաթևի գմբեթարդի վրա փորագրված իշխան Ամիր Քրդի և վրաց Գեորգի Գ. թագավորի արձանագրությունների թվականով (1177—1178 թթ.)[7]։

Վերակառուցման ժամանակ կամարների բեռը թեթևացնելու նպատակով գմբեթարդները երիզող պայտաձև կամարների վրա դրվել է երկրորդ շարք կամար։ Սրանք, ի տարբերություն առաջին շարքի և ընդհանրապես Հայաստանի V—VII դդ. հուշարձաններում հանդիպող կամարների, դեպի կենտրոն լայնանում են և սլաքաձև կամարի տպավորություն են թողնում։

Այս առումով հարկ է հիշել Տաթևի վանքի գլխավոր տաճարը, ուր երկրաշարժից կործանված եկեղեցին վերականգնելու ժամանակ (1274 թ., Հայրապետ եպիսկոպոսի օրոք) հնագույն գմբեթակիր, կիսաշրջանաձև կամարների վրա դրվել են որոշակի սլաքաձև գծագրություն ունեցող կամարներ[8]։ Այս նույնը կատարվել է նաև Ծովիզի հուշարձանում, որի հետևանքով գմբեթատակ հիմքը նախկինի համեմատությամբ ավելի բարձր է ստացվել։ Ուստի, գմբեթարդների ծածկերի պահանջվող թեքությունը պահպանելու նպատակով հիմնական ծավալի անմշակ պատերի վրա ավելացվել է սրբատաշ քարերի երկու շարք։

Շրջանաձև թմբուկը իր համաչափություններով, վերին և ստորին քիվերով, լուսամուտների ներքին և արտաքին երեսակալների մշակմամբ անտարակույս պատկանում է XII դ.։ Համանման լուծման բազմաթիվ օրինակներ կարելի է ցույց տալ ինչպես Իշևանի, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների XII—XIII դդ. ճարտարապետական հուշարձաններում։

Հուշարձանի XII դ. վերակառուցված տարրերի մանրամասն քննությունը մեր նպատակից դուրս է։ Սակայն նշենք մի կարևոր մանրամաս։ Արևմտյան ճակատի կենտրոնում՝ թմբուկի քիվից ներքև, պահպանվել են միմյանցից մեկ մետր հեռավորությամբ տեղադրված քիվի երկու քարեր, որոնք իրենց տրամատով և չափերով նման են թմբուկի ստորին քիվին։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք գմբեթատակ քառակուսու արտաքին անկյունների քիվի մնացորդներն են, այն քիվի, որ ժամանակին շարունակվել է մինչև գմբեթարդների ծածկերին հանդիպելը։ Սրանից 0,40 մ վեր ձգվում է նաև թմբուկի ստորին քիվը։ Ուշագրավ է, որ նման լուծում Հայաստանում գրեթե չի հանդիպում, և մեզ հայտնի միակ օրինակը Տաթևի, նույնպես վերակառուցված, գլխավոր տաճարն է։

1197 թ. վերակառուցումից 16 տարի անց, 1213 թ. Իվանեն, ըստ երևույթին մասնակիորեն, վերանորոգում է Ծովիզի եկեղեցին և այս երկու աշխատանքների մասին արևելյան գմբեթարդի վրա փորագրել է տալիս մի արձանագրություն։ Աթաբեկ Իվանեի արձանագրությունից հայտնի է դառնում, որ եկեղեցին «վաղուց հետէ աւարել կայր»[9]։

Այս դեպքում կառույցի թվագրման միակ ելակետը հուշարձանի ճարտարապետական հորինվածքի և նրա կոնստրուկտիվ տարրերի քննությունն է։ Այժմ փորձենք պարզել, թե հուշարձանը ե՞րբ է կառուցվել և արդյո՞ք մինչև 1197 թ. որևէ վերակառուցման չի ենթարկվել։

---

7 Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 90։

8 Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 110։

9 Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 87։

Արդեն նշեցինք, որ կառույցի երեք հենախորշերը, բացի հարավայինից, արտաքուստ կրկնում են ներքին շրջանաձև հորինվածքը։ Կենտրոնագմբեթ շինությունների մեջ բացառիկ այս երևույթը, բացառիկ է նաև VI—VII դդ. հայկական հուշարձաններում։ Նման լուծում առկա է միայն ավելի վաղ շրջանի (IV—V դդ.) կառույցներում (Լուսակերտի և Գորիսի շրջանի Վերիշեն գյուղի միանավ դահլիճներ)։

Վրաց ճարտարապետության մեջ նույնպես այս երևույթը հազվադեպ է և առկա է վաղ շրջանի հուշարձաններում (Բոլնիսի Սիոն, V դ.) և այլն[10]։ Ներսից և դրսից շրջանաձև խորաններ ունեն հյուսիսային Սիրիայի վաղ շրջանի կառույցները՝ Նուրիյեի (IV դ.), Քֆեյերի, Քալբլուզեի և ս. Փոկասի բազիլիկաները (V դ.)։ Համանման լուծում ունի նաև Քալաթ Սեմանի (V դ.) քառաթև կենտրոնագմբեթ կառույցը։ Ուշագրավ է, որ վերջինիս արևելյան ճակատի կողային նավերի ծայրերում տեղադրված սենյակների արտաքին եզրագծերը նույնպես շրջանաձև են[11]։

Վերոհիշյալ տվյալներն արդեն իսկ վկայում են Ծովինարի եկեղեցու V դ. կառուցված լինելու հանգամանքը։ Այսուհանդերձ, հարկ է քննել նաև կառույցի առանձին տարրերը՝ արևելյան խորանի հորիզոնական գոտին և գմբեթակիր կամարների խոյակները։ Հորիզոնական գոտին բարդ տրամատի սալ է, որի վերին մասում ձգվում են միմյանց նկատմամբ 45° դասավորված նշաձև, իսկ ստորին մասում հյուսածո զարդատարրերի շարքեր։ Նույնատիպ տրամատ և զարդատարրեր ունեն նաև արևելյան խաչաթևի գմբեթակիր կամարների խոյակները, այն տարբերությամբ միայն, որ սրանց ստորին մասում ավելանում է երկու շարք իրար տակ դասավորված ուղղանկյուն ատամնաշար։

Այս զարդատարրերը լայնորեն օգտագործվել են VII դ. և առանձին-առանձին հանդիպում են այդ դարերի բազմաթիվ կառույցներում։ Թերևս այս պատճառով է, որ Հ. Եղիազարյանը, Բ. Էլարյանը և Ս. Ավագյանը Ծովինարի եկեղեցին համարում են VII դ. կառույց։ Սակայն դժվար չէ նկատել, որ դեկորատիվ այս տարրերը հայ ճարտարապետության մեջ օգտագործվել են նաև IV—VI դդ. (Երերույք, Ավան, Մաստարա) և ավելի ուշ շրջանի, նույնիսկ XVII դ. հուշարձաններում։ Ուրեմն, միայն խոյակների և բեմի դոտու մոտիվներից ելնելով չէ, որ պետք է որոշել հուշարձանի կառուցման ժամանակաշրջանը, այլ՝ տվյալ դեպքում, քանդակազարդ խոյակների և բեմի դոտու առկայությունից։

Հայ ճարտարապետության VII դ. հուշարձաններում՝ ընդհանրապես և գմբեթավոր քառաթև փոքր կառույցներում՝ մասնավորապես, չկա ոչ մի օրինակ, որ գմբեթակիր կամարների խոյակներն ունենան բարդ տրամատ կամ մշակված լինեն զարդամոտիվներով։ Մինչդեռ V դ. կառույցները տալիս են համանման բազմաթիվ օրինակներ (Երերույք, Թանահատ, Փարպիի Ծիրանավոր և այլն)։ VII դ. չկա նաև արևելյան խորանում հորիզոնական քանդակազարդ գոտի ունեցող կառույցի և ոչ մի նմուշ։ Այն դարձյալ հանդիպում է IV—V դդ. կառույցներում (Երերույք, Աշտարակի Ծիրանավոր և այլն)։ Այս

---

[10] Г. Н. Чубинашвили, Архитектура Кахетии, Тбилиси, 1959, стр. 220.

[11] Georges Tchalenko, Villages antiques de la Syrie du Nord, II. Paris, 1953.

օրինակները վկայում են, որ գլխավոր խորանի, կամ ավելի ճիշտ՝ «արևելք-արբությունն» ուղղության ընդգծումը ընդունված է եղել վաղ շրջանի հուշարձաններում։ Եվ թերևս այդ է պատճառը, որ Փարպիի Միրանավորում ու Երերույքում խորանի խոյակները մշակվել են։ Երերույքում խորանը շեշտվել է երկու քանդակազարդ գոտիներով (մեկը՝ հորիզոնական, մյուսը՝ թաղի կամարի վրա), Թանահատում և Բայբուրթում՝ մեկով (թաղի կամարի վրա)[12]։ Պարզ է, որ այս տարբեր լուծումները հետապնդում են մի հիմնական նպատակ. ընդգծել բեմի խորանը՝ պաշտամունքային կառույցի ամենակարևոր մասը։

Ինչ վերաբերում է գմբեթարդներին և սրանք պարփակող գմբեթակիր կամարներին, ապա դրանք, իրենց շեշտված պայտաձևությամբ, նույնպես բնորոշ են Հայաստանի վաղ միջնադարի կառույցներին։

Ծովինարի եկեղեցու նախնական կառուցվածքի թվագրման համար կարևոր է նաև նրա շինարարական տեխնիկան։ Մասնագիտական գրականության մեջ առկա է այն կարծիքը, թե Հայաստանի վաղ միջնադարի հուշարձանների պատերը իրականացվել են միայն սրբատաշ քարերով, իսկ համեմատաբար անմշակ քարերը օգտագործվել են մասսայական շինարարության մեջ[13]։ Սակայն վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ IV—VII դդ. թեև սակավաթիվ, բայց գոյություն են ունեցել անմշակ քարերից կառուցված հուշարձաններ։ Այս առումով հետաքրքիր է Լուսակերտի միանավ դահլիճը։ Կառույցն ունեցել է շինարարական երկու շրջան։ V դ. վերջում շարված սրբատաշ պատերի տակ նախկին հորինվածքից (IV դ. վերջ) պահպանվել են ողջ պարագծով ձգվող, մեկից երկու մետր բարձրությամբ կոպիտ և անմշակ բազալտե պատեր[14]։

Ուշագրավ է, որ Ծովինարում խաչաթևերի միացման անկյունները շարված են կարմրավուն քարով, իսկ գմբեթարդները, հորիզոնական գոտին և խոյակները՝ սպիտակ։ Այս տարբերությունը չպետք է վերագրել որևէ վերակառուցման, քանի որ մուտքը, որը կառուցվել է հիմնական ծավալի հետ միաժամանակ, իրականացված է մեկընդմեջ շարված կարմրավուն և սպիտակ քարերով[15]։

Ծովինարի հիմնական արժանիքներից մեկն այն է, որ հուշարձանը ինքնին փաստական վկայությունն է շինարարական մի տեխնիկայի, ըստ որի կոնստրուկտիվ կարևոր տարրերը ու հանգույցները շարվել են սրբատաշ, իսկ մնացած մասերը համեմատաբար անմշակ քարերով։ Շինարարական այս տեխնիկան հանդես եկավ և VII դ. (Բյուրականի Արտավազդիկ) ու լայնորեն օգտագործվեց IX—X դդ., առանձնապես Սյունիքի ճարտարապետության մեջ[16]։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ծովինարի (V դ.) ճարտարապետական

---

12 Բայբուրթի եկեղեցու չհրատարակված չափագրությունները և լուսանկարները մեզ է տրամադրել Մ. Հասրաթյանը։

13 Հարկ է նշել, որ շինարարական այս տեխնիկան օգտագործվել է դեռևս III դ. կառուցված Գառնիի բաղնիքում։

14 Մ. Մ. Հասրաթյան, Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձան (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 2, էջ 31)։

15 Թթե պարզվի, որ արևելյան խորանի հորիզոնական գոտին, թիվերը և գմբեթարդները վերակառուցված են, ապա անմշակ քարերից շարված հիմնական ծավալի կառուցման ժամանակը պիտի համարել, թերևս IV դ. վերջերը։

16 Ս. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 128։

հորինվածքը և նրա առանձին տարրերը՝ քանդակազարդ խոյակներ, հորիզոնական մշակված գոտի, վերին մասում ուղղանկյուն եզրագիծ ունեցող լուսամուտներ, կրկին հանդես են գալիս միայն IX—XII դարերում։

Հայաստանի V—VII դդ. քառախորան շինություններից մեզ հասել են ևս վեց հուշարձան։ Դրանցից յուրաքանչյուրն աչքի է ընկնում ոչ միայն այս տիպին բնորոշ ընդհանրություններով, այլև կոնկրետ ձևի ինքնուրույն ու առանձնահատուկ լուծումներով։



Նկ. 2. Հայաստանի V—VII դդ. քառախորան հուշարձանների հատակագծերը. 1. Ծովիզի Մորո ձորո վանքի ս. Աստվածածին, 2. Տայքի Սուրբ խաչ (Սրխեչ), 3. Արղնիի ս. Կիրակի, 4. Հոգեվանք, 5. Օշականի Մանկանց ս. Սիոն, 6. Փարպիի ս. Թարգմանիչք, 7. Ագարակի Ստեփանոս Նախավկա։

Տայքի Սուրբ խաչ եկեղեցին գտնվում է պատմական Հայաստանի Տայք[17] նահանգի Թորթում գավառի Ներսեսաշեն եկեղեցուց դեպի հյուսիս։ Տեղում առաջին և միակ ուսումնասիրությունը կատարել է պրոֆ. Ե. Թաղայշվիլին, 1917 թ.[18], վերջինիս վկայությամբ «Սուխբեչ»[19] կոչվող եկեղեցու գմբեթը և թաղերը ավերված են, հարավային պատը կանգուն է մնացել մոտ 1,70 մ բարձրությամբ, իսկ հյուսիսայինը՝ 3,20 մ: Միակ մուտքը արևմուտքից է։ Արևելյան և հարավային կողմերում տեղադրված են մեկական լուսամուտ։

Հատակագծային հորինվածքով կառույցը նույնանում է Ծովիզի ս. Աստվածածին եկեղեցու հետ, միայն այն տարբերությամբ, որ Ծովիզում ուղղանկյուն է հարավային խաչաթևը, իսկ Սուրբ խաչում՝ արևմտյանը։ Ուշագրավ է, որ Սուրբ խաչը գրեթե կրկնում է Ծովիզի առանցքային չափերը (առաջինի արևելք-արևմուտք առանցքային երկարությունը 6,84 մ է, երկրորդինը՝ 7,00 մ, իսկ հյուսիս-հարավ առանցքի չափերը՝ համապատասխանաբար 6,90 մ և 6,70 մ):

---

17 «Մեծ Հայքի 14-րդ նահանգը... Տայքը կոչվել է նաև «Խորագոյն Հայք» (Armenia Profunda) և մինչև 8-րդ դ. Մամիկոնյանների կալվածքն էր» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 84)։

18 Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тбилиси, 1952, стр. 81.

19 «Դժվար չէ տեսնել, որ, այսպես կոչված, Սուխբեչն ոչ այլ ինչ է, քան հին հայկական Սուրբ խաչ անվան աղավաղումը» (Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 165)։

Ծովիզի հատակագծային հորինվածքը վերլուծելիս մատնանշեցինք, որ այն բնորոշ է միայն վաղ շրջանի կառույցներին։ Ե. Թաղայշվիլու հավաստմամբ Սուրբ խաչը «անտարակույս շատ հին կառույց է, հավանաբար ոչ ուշ-

Նկ. 3. Արզնիի ս. Կիրակին հյուսիս-արևմուտքից։

քան V—VI դդ.»[20]։ Սակայն վերը նշված համադրումը թույլ է տալիս ենթադրելու, որ Սուրբ խաչը կառուցվել է Ծովիզի հետ նույն ժամանակաշրջանում՝ V դ. վերջում։

[20] Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 81։

Արզնիի ս. Կիրակի եկեղեցին գտնվում է բնակավայրի հյուսիս-արևմտյան կողմում։ Հուշարձանը համեմատաբար լավ է պահպանված և նրա ծավալա-տարածական ողջ հորինվածքը մեզ հասել է անփոփոխ։ Վերջինիս հիմքը՝ կենտրոնական քառակուսին (2,32×2,32 մ), չորս կողմից շրջապատված է գմբեթարդներով ավարտված կիսաշրջանաձև հենախորշերով։ Անցումը կենտրոնական քառակուսուց դեպի ութանիստ թմբուկ լուծված է միակտուր քարի մեջ փորված չորս փոքր տրոմպների, իսկ թմբուկից գմբեթ՝ երկրորդ շարքի ավելի փոքր, ութ տրոմպների միջոցով։

Հենախորշերը՝ բացառությամբ արևմտյանի, ուր տեղավորված է միակ մուտքը, ունեն միակտուր քարի մեջ փորված, դեպի ներս լայնացող կլոր լուսամուտներ, որոնք իրենց վերին մասերով ագուցված են գմբեթարդի շարվածքին։ Նույնաձև լուսամուտներ կան նաև թմբուկի արևելյան և արևմտյան նիստերի վրա։ Ներքին քառախորան հորինվածքը արտաքինից պարփակված է ութանիստ ծավալով։ Այն բարձրանում է քիվով ավարտվող քառակուսի (5,60×5,60 մ) պատվանդանի վրա։ Կառույցի շարվածքը իրականացված է տեղական վարդագույն սրբատաշ տուֆից։ Շարքերի հորիզոնական կարանները ունեն 45° եզրակոսներ։ Ճակատները զերծ են հարդարանքից, եթե չհաշվենք թմբուկի շրջանաձև լուսամուտների պարզ տրամատները։ Հատակագծային և ծավալա-տարածական հորինվածքի, ինչպես և մանրամասների վերլուծությունը թույլ է տալիս հուշարձանը թվագրելու VI դ. առաջին կեսով[21]։

Արզնիի ս. Կիրակի եկեղեցին արժեքավոր է ոչ միայն իբրև քառախորան կառույցի տարբերակ, այլև իր եզակի այն առանձնահատկություններով (հատակագծի ութանկյուն եզրանկար, ուղղանկյուն պատվանդան, կլոր լուսամուտներ), որոնց չենք հանդիպում այդ և հետագա դարերի հուշարձաններում։

Հոգեվանքի քառախորան հուշարձանը (Անիի շրջան) գտնվում է Մարալիկից դեպի Սառնաղբյուր տանող ճանապարհի աջակողմյան թեք սարալանջին՝ Հոգեվանքի գլխավոր եկեղեցուց (XII դ.) մոտ 50 մ դեպի հյուսիս[22]։

Կարմրավուն սրբատաշ տուֆից կառուցված հուշարձանը ամբողջությամբ ավերված է։ Պահպանվել է ստորին շարքը, որն ուրվագծում է միայն հատակագծային հորինվածքը։ Վերջինս կազմված է միմյանց հպվող, 2,50 մ տրամագիծ ունեցող կիսաշրջանաձև խորաններից, որոնք արտաքինից առնված են եռանիստ պատերի մեջ այնպես, որ խաչաթևերի կողային պատերը կազմում են բութ անկյուններ։ Թեև վաղ շրջանի քառաթև փոքր կառուցվածքների մեջ այս հուշարձանը առանձնանում է խաչաթևերի արտաքին ծավալների եռանիստ մշակմամբ[23], սակայն նման լուծում առկա է V—VII դդ. այլատիպ շինություններում (Ողջաբերդ, Բագավան), որոնցում ևս կիսաշրջանաձև խորանները արտաքինից ամփոփված են եռանիստ պատերի մեջ։

Հուշարձանի դեկորատիվ հարդարանքից պահպանվել է միայն քիվի մի կտոր, որի թեքադիր մակերեսը մշակված է զամբյուղավոր, հյուսածո զարդա-

---

21 Հուշարձանի մանրամասն քննությունը տես Վ. Գ. Գրիգորյան, Արզնիի քառախորան հուշարձանը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 7, էջ 76—82)։

22 Մասնագիտական գրականության մեջ հուշարձանը ներկայացվում է առաջին անգամ։

23 Վասպուրականի շրջանի Բուտատ քառախորան վանքում, որը Մ. Տիերիի ենթադրությամբ կարող է պատկանել VII դ., խաչաթևերը արտաքինից նույնպես առնված են եռանիստ պատերի մեջ (M. Thierry, Monastéres Arméniens du Vaspurakan, Revue des études Arméniennes, հ. VIII, 1971, էջ 216 218)։

մոտիվով։ Քիվի այսպիսի մշակումը բնորոշ է VII դ. II կեսի հայկական հուշարձաններին[24]։

Ելնելով այս կառույցի խաչաթևերի արտաքին ուրվագծից և համաչափություններից, ենթադրում ենք, որ Հոգեվանքում խաչաթևերը առնվել են ոչ թե երկթեք, այլ վրանաձև ծածկերի տակ։ Մի բան, որ առավել բնորոշ է արտաքինից շրջանաձև կամ բազմանիստ խաչաթևեր ունեցող կառույցներին։

Նկ. 4. Օշականի Մանկանոց ս. Սիոնը հյուսիս-արևելքից։

Մանկանոցի ս. Սիոն եկեղեցին (Աշտարակի շրջան) գտնվում է Օշական գյուղից դեպի հյուսիս-արևմուտք ընկած Մանկանոց կոչվող վայրում։ Հուշարձանի տեղը և արձանագրությունը առաջին անգամ հրապարակել է Հ. Շահխաթունյանցը[25]։ Հետագայում կառույցի մասնագիտական քննությանն անդրադարձել են Թ. Թորամանյանը, Յու. Յարալովը և Ստ. Մնացականյանը[26]։

24 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 166.

25 Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հ. 2, էջմիածին, 1842, էջ 82։

26 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2,.

Ս. Սիոն եկեղեցին մեզ հասել է կիսավեր վիճակում։ 1950 թ. ՀՍՍՀ հուշարձանների պահպանության վարչությունը ձեռնարկել է կառույցի վերանորոգումը, որի ժամանակ վերաշինվել են թմբուկի վերին մասերը, հարավային և արևմտյան ճակատների որմնախարիսխները, պատի ստորին երկու շարքը, գրեթե ամբողջությամբ ավերված քիվերը, մուտքի կամարը՝ ձախակողմյան զույգ որմնասյուներով։ Վերաշարվել են նաև ներսի ստորին շարքերի երեսպատման քարերը[27]։ Հուշարձանի հատակագծի հիմքը քառակուսի է (2,75×2,75 մ), որին չորս կողմից հպվում են 2,15 մ տրամագիծ ունեցող կիսաշրջանաձև խորանները։ Վերջիններիս հպման անկյուններում զետեղված են հատվածքում ուղղանկյուն ուրվագիծ ունեցող որմնասյուներ, որոնք ճակատային մասում փոքր-ինչ կլորացված են։ Դեպի թմբուկ անցման առաջին շարք տրոմպները բաղկացած են նրեք սեպաձև քարերից և տեղադրված են գմբեթակիր զույգ կամարները պարփակող քառակուսու անկյուններում։ Թեև թմբուկի վերին մասերը չեն պահպանվել, սակայն կասկածից վեր է, որ փոխանցման երկրորդ շարքը իրականացվել է միակտուր քարից փորված ութ փոքր տրոմպներով։

Չորս խաչաթևերի կենտրոնական մասերում զետեղված են դեպի ներս լայնացող մեկական լուսամուտներ։ Արևելյանը, ի տարբերություն մյուսների, բացված է խորանում փորված խորշի մեջ։ Մեկական լուսամուտներ կան նաև թմբուկի կենտրոնական նիստերին։ Արևելյան խաչաթևում տեղադրված է միակ մուտքը, որը ձևավորված է բավական առաջ մղված երկկողմանի զույգ որմնասյուներով[28]։

Հուշարձանը կառուցված է կանոնավոր շարված վարդագույն սրբատաշ տուֆից։ Հարավային խաչաթևի հարավային և արևելյան ճակատներում, ինչպես նաև մուտքի բարավորի վրա, կան նվիրատվական արձանագրություններ[29], որոնց մեջ հիշատակվում է եկեղեցու անունը։ Ծավալա-տարածական հորինվածքով և առանձին մանրամասներով (տրոմպ, քիվ, երեսակալ, շքամուտք) շինությունը սերտորեն կապվում է VII դ. կառույցների հետ։ Վերջիններիս հետ հուշարձանը առնչվում է նաև դեկորատիվ հարդարանքով։ Քիվերի և լուսամուտների երեսակալների ձևն ու մշակումը համարյա նույնությամբ հանդիպում են Կարմրավորում (VII դ.), իսկ շքամուտքի ձևը կրկնում է VII դ. լայնորեն տարածված շքամուտքերը։ Նշված դարին բնորոշ մանրամասներից է նաև բարավորի վրա ուղղանկյուն շրջանակի մեջ առնված ծաղկած խաչը։

Փարպիի ս. Թարգմանիչք եկեղեցին (Աշտարակի շրջան) գտնվում է Փարպի գյուղում, բարձրադիր զառիթափ բլրի կատարին։ Այս «փոքրիկ խաչաձև

Երևան, 1948, էջ 137, 142, 220, Ю. Яралов. Некоторые особенности памятников Армении VII века («Архитектурное наследство», 3, М., 1953, стр. 86); С. Х. Мнацаканян, О некоторых вопросах истории армянской архитектуры, Ереван. 1969. стр. 88—89.

27 «Հաշվետվություն Աշտարակի շրջանի Օշական գյուղի ս. Սիոն հուշարձանի 1950 թ. վերանորոգման աշխատանքների» (ՀՍՍՀ Պետինի հուշարձանների պահպանության վարչության արխիվ)։

28 Թ. Թորամանյանը և Յու. Յարալովը մատնանշում են մուտքի առկայություն նաև հարավային խաչաթևի արևմտյան ճակատում։ Սակայն այդտեղ մուտք գոյություն չունի։ Թերևս մուտքի տպավորություն է թողել խաչաթևի այդ մասում քանդված պատի բացվածքը, որը պարզապես միշանցիկ է դարձրել ներսից տեղադրված որմնախորշը։

29 Արձանագրությունների տեքստը տե՛ս Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 82, Գ. Ալիշան, Այրարատ, 1890, էջ 194։

մատրան» տեղի և անվան վաղ հիշատակությունները կան Հ. Շահխաթունյանցի և Ղ. Ալիշանի մոտ[30]։ Մասնագիտական գրականության մեջ հուշարձանը առաջին անգամ ներկայացրել է Թ. Թորամանյանը[31]։

Փարպիի Թարգմանիչք կամ Թարգմանչաց եկեղեցին մեզ է հասել ավերված, կառույցի շուրջը թափված բեկորներով։ Այժմ կանգուն են միայն խաչաթևերի՝ մոտ 2 մ բարձրությամբ պատերը։ Շարվածքը իրականացված է դարշնագույն, սրբատաշ տուֆի մեծագիր քարերից՝ 1,0 մ, 0,77 մ, 0,65 մ բարձրությամբ։ Պատերին պարզորոշ երևում են տարբեր գծանկարի նշանագրեր։



Նկ. 5. Փարպիի ս. Թարգմանիչք եկեղեցին հարավից։

Հատակագծային հորինվածքի հիմքը գմբեթատակ քառակուսին է՝ չորս կողմից շրջապատված կիսաշրջանաձև խորաններով, որոնք արտաքինից առնչված են ուղղանկյուն ուրվագիծ ունեցող պատերի մեջ։ Գմբեթատակ հիմքի անկյուններում տեղադրված են հատվածքում շրջանաձև որմնասյուներ։ Նման որմնասյուներով են լուծված նաև խաչաթևերի միացման արտաքին ան-

30 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. 2, էջ 76, Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 159։

31 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 227։

կյունները։ Հուշարձանի միակ մուտքը հարավից է։ Այն երկու կողմից ունի զույգ որմնասյուներ, որոնք կրում են քանդակազարդ ուղղանկյուն բարավոր։ Պատի կանդուն մնացած հատվածները այնքան ցածր են, որ լուսամուտների քանակի մասին հնարավոր չէ ստույգ որևէ բան ասել։

Ընդհանուր առմամբ կարելի է վերակազմել Փարպիի Թարգմանիչք եկեղեցու ծավալա-տարածական հորինվածքը։ Զննումների ժամանակ մեզ հաջողվեց գտնել ճակատային մասում տրամատված, դեպի ներս գոգավոր մի քար, որի ձևից դժվար չէր կռահել, որ այն պատկանել է փոխանցման համակարգի և թմբուկի միջև ընկած գոտուն։ Հենց այս գոտու առկայությունը հիմք է տալիս պնդելու, որ գմբեթատակ հիմքից դեպի թմբուկ անցումը իրականացվել է առագաստաձև փոխանցումով, և թմբուկը ներսում շրջանաձև է եղել։

Հուշարձանի արտաքին պատկերի վերակազմության մեջ թերևս ամենատարակուսելին այն է, թե ինչպես են ավարտվել խաչաթևերի հանդիպման անկյուններում տեղադրված շրջանաձև որմնասյուները։ Ըստ Ցու. Ցարալովի դրանք Եղվարդի Ջորավար եկեղեցու նման պսակվել են կիսասֆերայով[32]։ Մեր կարծիքով հիմնական ծավալի քիվը, անփոփոխ պահելով իր ձևն ու հարդարանքը, երիզել է նաև որմնասյուները՝ կրկնելով որմնասյան խարսխի ուղղանկյուն ուրվագիծը[33]։ Պետք է ենթադրել, որ ուղղանկյուն այս հատվածները պայմանավորել են գմբեթատակ քառակուսու, ինչպես և գմբեթի արտաքին չափերը։ Այս դեպքում գմբեթատակ քառակուսու արտաքին նիստերի լայնությունը ավելի մեծ է եղել, քան նրանց համապատասխանող խաչաթևերի լայնությունը։

Փարպիի ս. Թարգմանիչք եկեղեցին հատակագծային հորինվածքով առնչվում է VII դ. կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների հետ։ Գմբեթատակ քառակուսու ներքին անկյունների լուծմամբ այն հիշեցնում է Ագարակի հուշարձանը, իսկ արտաքին անկյունների լուծմամբ՝ Ծպնիի, Արտաշավանի, Քարաշամբի կառույցները։ Ինչ վերաբերում է դեկորատիվ հարդարանքին, ապա շուրջը թափված քիվի, պսակների կտորները և քանդակազարդ բեկորները միանգամայն բնորոշ են VII դ. հայ ճարտարապետական ոճին։ Սակայն այդ բեկորների մեջ բավական շատ են նաև ավելի ուշ շրջանի մանրամասներ՝ լուսամուտի երեսակալ, քիվի մնացորդներ և այլն[34]։ Սրանց, ինչպես և հուշարձանի արևելյան խաչաթևի բարձր, կիսաշրջանաձև աստիճաններ ունեցող բեմի առկայությունը ակնարկում է, որ հուշարձանը ենթարկվել է վերանորոգման, թերևս նաև վերակառուցման։ Մեզ թվում է, որ վերակառուցման արդյունք է հուշարձանի մուտքի երկրաչափական զարդամոտիվներով լուծված բարավորը։

Փարպիի ս. Թարգմանիչք հուշարձանի ճշգրիտ թվագրումը վճռական կարող է լինել թե՛ նույնատիպ կառույցների, թե՛ ընդհանրապես հայ միջնադար-

---

32 Ю. Яралов, նշվ. աշխ., էջ 86։

33 Դժվար է ասել, թե քիվի այդ հատվածը անմիջապե՞ս է դրվել որմնասյան վրա, թե՞ որմնասյունը ունեցել է խոյակ, և քիվը պսակել է նրա վերին հատվածը։ Վերջինս ավելի հավանական է թվում, եթե նկատի ենք առնում հուշարձանի որմնախարիսխների հարուստ մշակումը։

34 Բացառված չէ, որ այդ բեկորների մի մասը հուշարձանի հետ առնչություն չունի և մոտակա կառույցի մնացորդներ են։

յան ճարտարապետության որոշ առանձնահատկությունների պարզաբանման առումով[35]։

Ագարակի Ստեփանոս Նախավկա եկեղեցու մասին առաջին տեղեկությունը հայտնում է Ղ. Ալիշանը. «... Երկու մղոնաւ հեռի 'ի Տեկերոյ, առ խառնրդովք բաղում վտակաց որ գետանան 'ի Տեկոր, Ագրակ կամ էգրեկ կոչեցեալ յայմուս, և Ագարակ 'ի հնումն ունի եկեղեցի չափավոր մեծութեամբ, խաչաձև, կանգուն կաթուղիկէիս...»[36]։ Մասնագիտական գրականության մեջ հուշարձանը (հատակագծով ու լուսանկարով) առաջին անգամ ներկայացրել է Թ. Թորամանյանը, իսկ համեմատաբար ավելի մանրամասն քննությամբ՝ Հ. Ստրժիգովսկին[37]։

Բավական լավ պահպանված այս հուշարձանը, եթե նկատի չառնենք խաչաթևերի թափված տանիքները, մեզ է հասել առանց որևէ էական վերանորոգման։ Հետագա վերանորոգման արդյունք է միայն գմբեթի քարե սալերով ծածկը։

Եկեղեցին կառուցված է կանոնավոր շարքերով շարված սրբատաշ տուֆից։ Արևելյան ճակատի խորանի և ավանդատների պատերի վրա պարզորոշ երևում են հայատառ և երկրաչափական նշանագրեր։

Հատակագծային հորինվածքի հիմքը՝ գմբեթատակ քառակուսին կազմված է չորս կիսաշրջանաձև հենախորշերից։ Դրանք միմյանց հպված են երեք քառորդ, հատվածքում շրջանաձև սյուներով, որոնց վրա էլ հանգչում են գմբեթակիր կամարները։ Անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթի շրջանաձև հիմքը իրականացված է գմբեթակիր կամարները պարփակող, քառակուսու անկյուններում տեղադրված չորս մեծ և թմբուկի վերին շարքում զետեղված ութ փոքր տրոմպների միջոցով։ Գմբեթն ունի ճառագայթաձև, սկավառակներով վերջացող կողեր։

Արևելյան խաչաթևի երկու կողմերում տեղադրված են սեղանաձև հատակագիծ ունեցող, առանց խորանների մեկական ավանդատներ, որոնց մուտքերը հարավային և հյուսիսային խաչաթևերից են։ Հուշարձանն ունի երկու մուտք՝ արևմտյան և հյուսիսային հենախորշերում։ Հիմնական ծավալը լուսավորվում է արևմտյան և հյուսիսային մուտքերի վերին մասում տեղադրված երկու, թմբուկի չորս և երկու մուտքերի հանդիպակաց խաչաթևերի վրա բացված երեքական լուսամուտներով։ Արևելահայաց մեկական լուսամուտներով էլ լուսավորվում են ավանդատները։

Ագարակի հուշարձանի արտաքին ծավալային մշակումը գրեթե կրկնում է ներքին խաչաձև հորինվածքը։ Արտաքուստ հնգանիստ խաչաթևերով կազմված հիմնական ծավալի վրա բարձրանում է շինության երկրորդ հարկաբա-

---

35 Այս խնդրի լուծման համար ևս՝ ինչպես ժամանակին Թ. Թորամանյանը նշում էր հուշարձանի արտաքին պատկերը վերականգնելու առումով, անհրաժեշտ է պեղել կառույցի շուրջը և բոլոր կարևոր քարերը ի մի հավաքել։ Սակայն, ցավոք, մինչև օրս ոչինչ չի արվել։ Վերջին ժամանակներում նույնիսկ կառույցի պատերին կից գերեզմաններ են հիմնվել։

36 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 126։

37 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 111, J. Strzygowski, Die Baukunst Armenier und Europa, էջ 261—262 (ռուսերեն անտիպ թարգմանություն)։ Ագարակի եկեղեցին գտնվում է Արևմտյան Հայաստանում։ Տեղում ուսումնասիրելու հնարավորություն չունենալով, ստիպված ենք հուշարձանի նկարագրությունն ու քննությունը կատարել՝ հիմնվելով Թ. Թորամանյանի և Հ. Ստրժիգովսկու հրապարակած նյութերի վրա։

ժինը՝ ութանիստ թմբուկով գմբեթը։ Հիմնական ծավալը, թմբուկը, ինչպես նաև ավանդատները պսակված են պայտաձև կամարիկներով մշակված քիվով։ Մշակված են նաև բոլոր լուսամուտների երեսակալները։ Հատկապես արևելյան ճակատի երեք զուգակցված երեսակալների թեքադիր հարթությունը ամբողջապես հարդարված է խաղողի ողկույզների և տերևների ոճավորված մոտիվներով։ Հարավային և հյուսիսային լուսամուտների երեսակալները զարդարված են երկրաչափական նախշերով։ Արևմտյան լուսամուտի երեսակալը հարդարված է երկշարք կամարակապ գոտիով։ Իսկ թմբուկի արևմտյան լուսամուտը, քիվի նմանողությամբ, երիզված է պայտաձև կամարիկներով մշակված երեսակալով։



Նկ. 6. Ագարակի Ստեփանոս Նախավկա եկեղեցին հարավ-արևմուտքից։

Ագարակի եկեղեցու կառուցման ժամանակի մասին մատենագրական տեղեկություն չունենք։ Կառույցի վրա եղած արձանագրությունները նվիրատվական են, որոնցից մեկը պատկանում է ՆԾԵ (1006) թվականին[38]։ Ըստ Թ. Թորամանյանի «Հնագույն եկեղեցին... 5—7-րդ դարերուն պատկանելու հավանականությունն է տալիս»[39]։ Հ. Ստրժիգովսկին համեմատելով Ագարակը Մաստարայի, Արթիկի և Թալինի հուշարձանների հետ և ելնելով նրանց արտաքին հնգանիստ ծավալների, լուսամուտների և մուտքերի տեղաբաշխման ու երեսակալների զարդամոտիվային հարդարանքի ակնհայտ նմանությունից, ենթադրում է, որ «Մաստարայի, Արթիկի և Ագարակի շինություններն իրենց կա-

38 Այդ արձանագրություններում հիշատակվում է ս. Կաթողիկե անունը, որն ըստ Ղ. Ալիշանի պետք է որ հենց այս եկեղեցու անվանումը լինի։

39 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 111։

ռուցման ժամանակով (VII դ.) մոտ են միմյանց, կամ նույնիսկ կառուցված են նույն վարպետի կողմից»[40]։

Անդրադառնալով խորանի երեքական լուսամուտների առկայության փաստին, Ա. Երեմյանը Ագարակի եկեղեցու կառուցման ժամանակը համարում է 632—698 թթ[41]։

Հուշարձանի համեմատական քննությունը գմբեթավոր փոքր կառույցների հետ, նրա առանձին մանրամասների ձևն ու մշակումը, ինչպես նաև բուսական և երկրաչափական զարդամոտիվների միատիպ կիրառումը հիմք են տալիս ենթադրելու, որ Ագարակի Ստեփանոս Նախավկա եկեղեցին կառուցվել է VII դ. վերջերին։

Կառուցողական արվեստի տեսակետից ուշադրավ և արժեքավոր այս յոթ հուշարձանները հավաստում են, որ դեռևս V դ. սկսած, հատակագծային այլ հորինվածք ունեցող շինությունների հետ մեկտեղ, հայ ճարտարապետները առաջադրել են նաև քառախորան կենտրոնագմբեթ տիպը։ Վաղ միջնադարի հայ ճարտարապետության ուսումնասիրության համար քառախորան այս հուշարձանները բացառիկ նշանակություն ունեն։ Այս տիպի կառուցվածքներն էին, որ հիմք հանդիսացան ընդհանրապես հայկական կենտրոնագմբեթ հորինվածքների համար և այստեղ մշակված կառուցողական սկզբունքները կարմիր թելի պես անցնում են կենտրոնագմբեթ ամենաբարդ սիստեմներով, կազմելով նրանց տեկտոնական առանցքը[42]։

РАННЕСРЕДНЕВЕКОВЫЕ АРМЯНСКИЕ ЧЕТЫРЕХКОНХОВЫЕ ПАМЯТНИКИ

В. Г. ГРИГОРЯН

Резюме

Четырехконховые церкви Армении, входящие в подгруппу малых крестово-купольных памятников, представляют большую ценность для исследования не только сооружений этого типа, но и центрально-купольных сооружений армянской архитектуры раннего средневековья вообще.

Изучение плановой композиции, конструктивных и декоративных особенностей 7 памятников подобного типа, а также их сравнительный анализ выявляют не только черты общности этого типа памятников, но и своеобразие решений каждого из них. Архитектурные особенности этих сооружений и прямые аналогии с памятниками армянской архитектуры раннего средневековья позволяют датировать церкви Цровиз и св. Хач в Тайке концом V в., св. Кираки в Арзни — первой половиной VI в., св. Сион в Манканоце, Степанос Нахавка в Агараке, св. Таркманичк в Парпи и церковь в Огеванке — VII в. Судя по плановому решению и отдельным деталям, последние две церкви относятся к VII в., но

---

40 Strzygowski, նշվ. աշխ., էջ 261, 262։

41 Ա. Բ. Երեմյան, 7-րդ դարում հայկական հուշարձանների կրած մի փոփոխության մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 162)։

42 Ս տ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 117։

для более определенной датировки и окончательного восстановления их объемно-пространственной композиции крайне необходимы раскопки построек, оставшихся под грудой развалин.

В группе четырехконховых построек особый интерес представляет церковь св. Аствацацин в Црвизе, которая фактически является одной из начальных форм крестово-купольной композиции. И не случайно памятник в Црвизе имеет орнаментально отделанные капители главной апсиды и протянутый между ними также отделанный горизонтальный пояс. Это те особенности, которые характерны только для памятников V века.

Примечательно, что в V—VII вв. уже были разработаны все возможные варианты плановых и, соответственно, объемно-пространственных решений четырехконховой постройки. И если в последующие века в армянской архитектуре не встречаются все эти варианты, то именно часть их была почти одинаково использована для подобных построек, и лишь в разные периоды вносились изменения в пропорции и в декоративное убранство.

Эти семь памятников свидетельствуют о том, что уже с начала V в. армянские архитекторы, наряду с постройками различных композиций, выдвинули и четырехконховый центрально-купольный тип. Именно сооружения этого типа стали краеугольным камнем армянских центрально-купольных композиций вообще, и разработанные здесь строительные принципы легли в основу сложнейших центрально-купольных систем.